«Քաղաքային պլանավորման երևանյան մարտահրավերները» թեմայով

շահագրգիռ կողմերի քննարկման

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Երևան, 1 օգոստոսի, 2024թ.

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնը (ԹԻՀԿ) Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (NED) աջակցությամբ Երևանի քաղաքապետարանի գործունեության մոնիտորինգի ծրագրի շրջանակում 2024թ. օգոստոսի 1-ին կազմակերպել էր «Քաղաքային պլանավորման երևանյան մարտահրավերները» խորագրով ֆորում-քննարկումը:

Միջոցառմանը ներկա է գտնվել մոտ 60 մասնակից, այդ թվում՝ քաղաքային պլանավորման ոլորտի մասնագետներ, ճարտարապետներ, շահագրգիռ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ և անհատ քաղաքացիներ:

Ֆորումի ընթացքում պանելային փորձագիտական քննարկումների միջոցով վեր են հանվել Երևանի կառուցապատման գործող պրակտիկայի հետևանքով առաջացած խնդիրները և անդրադարձ է կատարվել դրանց պատճառներին: Խմբային թեմատիկ քննարկումների արդյունքում ֆորումի մասնակիցները ներկայացրել են վերհանված խնդիրների լուծմանն ուղղված առաջարկներ, որոնք ներկայացված են ստորև:

Ակնկալվում է, որ ներկայացվող խնդիրներն ու առաջարկներն, ըստ վերաբերելիության, կարտացոլվեն Երևանի քաղաքային պլանավորման հիմնական ռազմավարական ծրագրային փաստաթղթում, այն է՝ ներկայում քննարկման դրված Երևանի գլխավոր հատակագծում, մշակվելիք գոտևորման փաստաթղթերում և/կամ քաղաքային կառավարման միջոցառումներում, ինչպես նաև հիմք կդառնան համապատասխան օրենսդրական նախաձեռնությունների համար:

<u>Ընդհանուր բնույթի առաջարկներ</u>

Իրավական կարգավորում և կիրարկում

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքում (1998 թ.) առկա են բազմաթիվ խնդիրներ, հակասություններ և բացեր: Օրենքով միաժամանակ նախատեսված են և գործադրվում են և՛ շուկայական տնտեսության (օրինակ՝ գոտևորման նախագիծ), և՛ խորհրդային ժամանակաշրջանի հրամայական կառավարման (օրինակ՝ ճարտարապետա-հատակագծային առաջադրանք) գործիքներ, ինչը ստեղծում է խառնաշփոթ և հնարավորություն տալիս շահարկումների համար: Միաժամանակ օրենքները (այդ թվում՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը) պատշաճ չեն կիրարկվում, իսկ օրենսդրությամբ նախատեսված

պատասխանատվության միջոցները հաճախ ադեկվատ չեն և ի զորու չեն կանխարգելել հետագա խախտումները: Դատավարական գործընթացները ևս անարդյունավետ չեն և փաստացի չեն փոխում իրավիճակը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքով նախատեսված է ունենալ ստույգ տվյալների բազա՝ քաղաքաշինական միասնական կադաստր, որի հիմքում կդրվեր անշարժ գույքի կադաստրը և կապ կհաստատվեր այլ առնչվող տեղեկատվական բազաների հետ, ինչը հիմք կդառնար բոլոր քաղաքաշինական գործողությունների՝ պլանավորման, նախագծման, թույլտվությունների տրամադրման, կառուցապատման, շահագործման և այլնի համար: Մինչ օրս քաղաքաշինական միասնական կադաստր առկա չէ, և կառուցապատմանն առնչվող որոշումներն ընդունվում են առանց հիմքում ունենալու պատշաճ տվյալներ: Գոյություն ունեցող ոչ լիարժեք տվյալները, որ պետք է բաց լինեին բոլորի համար, հասանելի են միայն Երևանի քաղաքապետարանին, ինչը որոշումների ընդունման և թույլտվությունների տրման գործընթացում առաջացնում է կոռուպցիոն ռիսկեր:

Խնդրահարույց շինթույլտվությունների տրամադրման, կառուցապատման պայմանների ընթացիկ փոփոխման, հաստատված նորմատիվների խախտումների, փոխկապակցված ընկերությունների մասնակցությամբ որոշումների ու գործարքների բազմաթիվ դեպքերը, հանրության իրազեկման, թափանցիկության և հաշվետվողականության պահանջների անտեսումը, ինչպես նաև խախտումների համար անպատժելիությունը վկայում են կոռուպցիոն ռիսկերի փաստացի նյութականացման և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների մասին:

<u>Առաջարկներ</u>

- Գնահատել, վերանայել և արդիականացնել քաղաքաշինությանն առնչվող օրենսդրությունը, այդ թվում՝ դիտարկելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենսգրքի մշակման նպատակահարմարությունը՝ կցկտուր և հակասական իրավակարգավորումները ամբողջականացնելու նպատակով:
- Ամբողջականացնել քաղաքաշինության հիմքում դրվող բազային տվյալները (այդ թվում՝ տարածական տվյալներ, կադաստրային քարտեզներ, վերգետնյա և ստորգետնյա ենթակառուցվածքներ, տրամադրված թույլտվություններ և այլն), ապահովելով դրանց հավաստիությունը և պարբերական թարմացումը, այդ թվում՝ ներդնելով տվյալների հավաքագրման ժամանակակից ինքնաշխատ համակարգեր և ապահովելով իրական ժամանակում մոնիտորինգ:
- Քաղաքաշինությանն առնչվող ցանկացած որոշում ընդունելիս հիմնվել հուսալի և առաջնային տեղեկատվության վրա՝ օգտագործելով արդիականացված տվյալների բազաները:
- Ապահովել պատշաճ իրավակիրարկումը և խրախուսել օրինապահությունը, այդ թվում՝ ապահովելով արդար և համապարփակ կարգավորումներ և պատասխանատվություն իրավախախտումների համար:
- Մշակել Երևանի տարածքային զարգացման հայեցակարգ՝ ապահովելով հանրության տարբեր շերտերի և մասնագիտական շրջանակների հետ քննարկումներ:
- Քննարկման առարկա դարձնել գլխավոր հատակագծերի և այլ տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման գործող մեթոդաբանության վերանայման

հարցը՝ նկատի ունենալով գործնականում դրանց իրականացման բացերը և խնդիրները:

Թափանցիկություն և հանրային մասնակցություն

Հետազոտությունները,[1] քաղաքացիների և քաղաքացիական հասարակության տարբեր խմբերի փորձառությունը ցույց են տալիս, որ Երևանի քաղաքապետարանը աշխատում է ոչ թափանցիկ, հանրության տարբեր հատվածների և քաղաքացիական հասարակության հետ ոչ համագործակցային եղանակով: Կառուցապատման և հողի նշանակության փոփոխության հարցերը հաճախ թափանցիկ չեն նույնիսկ Երևան քաղաքի ավագանու համար, քանի որ դրանք հաճախ ավագանու նիստերի ժամանակ լինում են «չզեկուցվող», ի տարբերություն օրինակ՝ հուշատախտակների տեղադրման հարցերի:

Երևանի քաղաքապետարանի ոչ թափանցիկ աշխատելաոճի տիպիկ օրինակն ու կուլմինացիան հենց Երևանի գլխավոր հատակագծի մշակման գործընթացն է, որում չեն ներգրավվել ինչպես շահագրգիռ հանրությունը, այնպես էլ մասնագիտացված կառույցները, ինչպես օրինակ՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի մասնագիտացված ինստիտուտները կամ Հայաստանի ճարտարապետների պալատը:

Այսօրինակ պրակտիկան հակասում է ՀՀ կողմից վավերացված մի շարք միջազգային փաստաթղթերի, ինչպես օրինակ՝ Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացում հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիայի (Օրհուս, 1998), Եվրոպայի խորհրդի (ԵԽ) Լանդշաֆտի եվրոպական կոնվենցիայի (Ֆլորենցիա, 2000) և ՄԱԿ-ի ԵՏՀ Անդրսահմանային համատեստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին (Էսպու, 1991) կոնվենցիային կից Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին արձանագրության (Կիև, 2003) պահանջներին:

Համեմատության նպատակով արժե նշել, որ 2005 թ. քաղաքի գլխավոր հատակագծի ընդունման ժամանակ փաստաթղթի ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվության մոտ 5 ամիս տևած գործընթացում տեղի են ունեցել թվով 7 փորձագիտական ու հանրային քննարկումներ: Դրանց մասնակցել է շուրջ 270 փորձագետ, քաղհասարակության ներկայացուցիչ և շահագրգիռ քաղաքացի, որոնց կարծիքները զգալի չափով հաշվի են առնվել Երևանի քաղաքապետարանի, «Երևաննախագիծ» ինստիտուտի և ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի կողմից և համապատասխանաբար արտացոլվել լրամշակված փաստաթղթերում:

<u>Առաջարկներ</u>

- Ապահովել քաղաքային պլանավորման և ենթակառուցվածքների զարգացման, գնահատումների ու մոնիտորինգի գործընթացների թափանցիկությունը՝ ներդնելով նախագծային վերանայման խորհուրդ (design review board), երաշխավորելով

[1] https://transparency.am/en/publication/174, https://transparency.am/hy/publication/345

միջգիտակարգային երկխոսություն տարբեր ոլորտների մասնագետների մասնակցությամբ և համագործակցություն համապատասխան կառույցների հետ:

- Քաղաքաշինությանն առնչվող որոշումների կայացման գործընթացում ապահովել մասնագիտական և ոչ մասնագիտական հանրության հետ հանրային քննարկումներ, ապահովել ՀՀ օրենքներով սահմանված՝ հանրային իրազեկմանն ու մասնակցությանն առնչվող բոլոր օրենսդրական պահանջների կատարումը, այդ թվում՝ ներդնելով ու պարտադիր կիրառելով հանրային իրազեկման և քննարկումների բարելավված մեխանիզմներ:

<u>Թեմատիկ առաջարկներ</u>

Ժառանգություն և քաղաքապատկեր (cityscape)

Վերջին 20 տարիների ընթացքում կառուցապատման արդյունքում վերացվել, վնասվել են և ներկայումս էլ շարունակում են ոչնչացվել կամ խեղվել Երևան քաղաքի ժառանգության շերտերը, ինչպես առանձին ճարտարապետական հուշարձանները, այնպես էլ՝ պատմական և մշակութային միջավայրը/թաղամասերը (վերջին տարիներին՝ Ֆիրդուսի թաղամասը, Ֆիզիկայի ինստիտուտի գիտավանը, Կոնդը): Երևան քաղաքում մինչ օրս քանդվել-ոչնչացվել է ավելի քան 30 շենք, ևս 30-ը վտանգված է, մոտ 15-ը ապամոնտաժվել է և չի վերականգնվել:[2]

Չկանոնակարգված կառուցապատման և անպատժելիության արդյունքում աղավաղվել է ընդհանուր քաղաքապատկերը, կենսապատկերը (լանդշաֆտը), ուրվագիծը, տեսարանները, մասշտաբը, գույնը, միջավայրը, մշակույթը: Մշակութային ազդեցության առումով հերթական ռիսկային որոշումը երևանյան բուհերի տեղափոխումն է և կենտրոնացումը Ակադեմիական կոչվող քաղաքում:

<u>Առաջարկներ</u>

Պահպանում և օգտագործում

- Քաղաքի կառավարման գործընթացում առաջնորդվել քաղաքային ժառանգության պահպանման կանխավարկածով՝ ապահովելով պատմական ու մշակութային արժեքների պահպանությունը:
- Կատարելագործել պատմության և մշակույթի հուշարձանների և տարածքների/միջավայրների պաշտպանության իրավակարգավորումները՝ կանխելու դրանց ոչնչացումը կամ աղավաղումը:
- Ստեղծել անկախ մարմին հուշարձանների կառավարման և պահպանման համար՝ ապահովելով արդյունավետ վերահսկողություն՝ քաղաքապետարանի կամ ՀՀ կառավարության ազդեցություններից հնարավորինս անկախ:
- Պատմամշակութային արժեք ունեցող նոր շենքերը և միջավայրեր/թաղամասերը, ինչպես նաև նորահայտ հուշարձանի կարգավիճակ ստացած կառույցները ներառել ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվող պատմության և մշակույթի հուշարձանների ցանկում՝ դրանց հնարավոր ոչնչացումը (այդ թվում՝ տեղափոխումը),

[2] https://transparency.am/oldsite/hy/assets/monuments

վնասումը, աղավաղումը կանխելու և համապատասխան խնամքն ու պաշտպանությունը կազմակերպելու համար:

- Քարտեզագրել և անձնագրավորել պատմամշակութային արժեք ունեցող հուշարձանները և թաղամասերը՝ ապահովելով հուշարձանների նկատմամբ գույքային իրավունքների և սահմանափակումների պետական գրանցումը՝ ամրագրելով դրանք սեփականության իրավունքի գրանցման վկայականներում անկախ իրավունքի սուբյեկտից:
- Արգելել պատմության և մշակութային հուշարձաններ պարունակող տարածքները առանց հուշարձանի պահպանության կառավարման պլանի (Conservation Management Plan) կառուցապատման տրամադրելը:
- Բացառել միջավայրը և մասշտաբը աղճատող կառուցապատումները (այդ թվում՝ ջանքեր ներդնելով վերանայու արդեն շինթույլատվություն ստացած կառուցապատման ծրագրերը):
- Ձեռնարկել քայլեր՝ լիարժեքորեն վերականգնելու քանդված-ոչնչացված, վնասված և ձևախեղված հուշարձան-շենքերը:

Մասնավոր սեփականատերերի ներգրավում

- Կնքել պահպանման պայմանագրեր/պարտավորագրեր պատմամշակութային ժառանգություն հանդիսացող շենքերի սեփականատերերի հետ, ըստ որի՝ նրանք կստանան հարկային արտոնություն դրանց վերանորոգման դեպքում, որոնք նախապես կհամաձայնեցվեն պետական մարմինների հետ:
- Մասնավորին պատկանող պատմամշակութային շենքերի ու հանրային նշանակություն ունեցող տարածքների համար ձևակերպել վերականգնման պարտադիր իրավական պահանջ, ժամկետներ և հետևանքներ, այդ թվում՝ պահանջների խախտման դեպքում գույքը սեփականատիրոջից վերցնելու հնարավորությունը:
- Իրազեկել պատմամշակութային ժառանգություն հանդիսացող շենքերի բնակիչներին շենքերի պատմական և գեղագիտական արժեքների, թույլատրելի և անթույլատրելի փոփոխությունների, ինչպես նաև պահպանման պայմանների վերաբերյալ:

Հանրային իրազեկում և ներգրավում

- Հանրայնացնել պատմամշակութային հուշարձանների ցանկը, քարտեզը, պատմական արժեքը:
- Յուրաքանչյուր հուշարձանի վրա տեղադրել տեղեկատվական վահանակ և QR կոդ, որոնք կտրամադրեն շենքի պատմության վերաբերյալ տեղեկատվություն՝ հասանելի տարբեր խմբերի համար, ներառյալ լուսագրեր, բրայելյան և աուդիո ֆորմատներ:
- Ստեղծել տեղեկատվական հոլովակներ հանրային հեռուստաընկերության միջոցով:

Հատուկ նախագծեր և տարածքներ

- Վերականգնել Երեբունի բերդաքաղաքը ու հարակից տարածքը:
- Կասեցնել Ֆիրդուսի թաղամասի, Ֆիզիկայի ինստիտուտի գիտավանի, Կոնդի՝ առանց հանրության ու մասնագիտական շրջանակների հետ քննարկման ծավալված

շինարարությունը. վերանայել կառուցապատման ծրագրերը՝ ապահովելու պատմամշակութային արժեքների ու միջավայրի պահպանումը:

- Վերանայել պատմամշակութային արժեք ներկայացնող միջավայրերում (այդ թվում՝ Արամ-Կողբացի-Բուզանդ-Աբովյան փողոցներով պարփակված տարածք) իրականացվող կառուցապատման նախագծերը և ձեռնարկել քայլեր՝ վերականգնելու քանդված արժեքավոր շենքերն ու խաթարված միջավայրը:
- Հանրայնացնել պատմական վայրերը (Կարմիր բլուր, Շենգավիթ, Պասկևիչի բլուր և այլն), իրականացնել արգելոց-թանգարանների վերակառուցման ծրագրերը՝ կառուցելով զբոսաշրջիկների սպասարկման կենտրոններ:
- Ձեռնարկել քայլեր վերականգնելու պատմամշակութային արժեքավոր չօգտագործվող օբյեկտները, օրինակ՝ «Մոսկվա» ամառային կինոթատրոն, «Հրազդան» մարզադաշտ:
- Պատմամշակութային հուշարձանների և պատմական միջավայր ձևավորող ճարտարապետական արժեքավոր շենքերի շրջակայքում հետագա ասֆալտապատումը փոխարինել տեղական նյութերով ու ավանդույթներով սալահատակով՝ պահպանելով աուտենտիկ միջավայրը և հետիոտն շարժումը:

Բնության և քաղաքային ժառանգություն

- Թարմացնել, հստակեցնել և պատշաճ հանրայնացնել բնության հուշարձանների ցանկը:
- Արգելել կիրճերում և դրանց առափնյա մասերում կառուցապատումը և, մասնավորապես, դադարեցնել Հրազդանի կիրճում սրճարանների և ռեստորանների գործունեությունը:
- Ցուցակագրել և քարտեզագրել քաղաքում առկա բոլոր 100 տարեկան և ավելի ծառերը և ճանաչել դրանք որպես քաղաքի պատմական ժառանգություն՝ սահմանելով նրանց պահպանման կանոնները:
- Երևանի կենտրոնում վերաբացել Գետառի հունը և բարեկարգել առափնյա տարածքը:

Քաղաքի լոկալ ինքնության (աուտենտիկության) պահպանում

- Պահպանել քաղաքի լոկալ ինքնությունը՝ վերականգնելով պատմական տեսքը, ներառյալ՝ օրինակ, թերթերի կրպակները, ներկարանները, բաղնիքները, թաղային մշակույթի տարրերը և/կամ այլ դրվագներ՝ խորհրդակցելով մասնագետների հետ:
- Կառուցապատման և պլանավորման ընթացքում հաշվի առնել քաղաքի ուրվագիծը/սիլուետը/տեսքը՝ խուսափելով այն կորցնելուց:
- Կառուցապատման մեջ նախապատվությունը տալ վարդագույն տուֆին:

Հանրային և կանաչ տարածքներ, էկոլոգիա

Երևանում մեկ շնչին ընկնող կանաչ տարածքների (ծառեր և թփեր) մակերեսը (7,6 քառ. մետր)[3] չի բավարարում Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ)

[3] https://www.yerevan.am/uploads/media/default/0001/82/a1fb05c6c1ce38ca1807b35d07ada8789e7fd871.pdf

հետազոտություններով առաջարկվող նորմին (9 քառ. մետր):[4] Եղած կանաչը անհավասարաչափ է բաշխված, որի արդյունքում Կենտրոնում, ըստ անկախ փորձագիտական գնահատումների, մեկ շնչին բաժին հասնող կանաչ տարածքը կազմում է մոտ 3 քառ. մետր: ԱՀԿ-ն նաև առաջարկում է, որպեսզի քաղաքի ցանկացած բնակիչ իր բնակության վայրից 5 րոպե կամ 300 մետր հեռավորության վրա ունենա կանաչ տարածքի հասանելիություն, որի նվազագույն մակերեսը պիտի լինի առնվազն 0,5 -1 հա:[5] ՀՀ շինարարական նորմերի համաձայն քաղաքի ընդհանուր տարածքի առնվազն 20 տոկոսը պետք է լինի կանաչապատ,[6] սակայն փորձագիտական գնահատականներով Երևանում այն կազմում է 4 տոկոս:[7] Երևանի քաղաքապետարանի կողմից կատարվում են կանաչապատման աշխատանքներ, սակայն մյուս կողմից շատ են ընթացիկ ծառահատումները (սրա վերաբերյալ տվյալներ առկա չեն) և որոշ տարածքներում գերբնակեցումը, սաղարթախիտ և թթվածին արտադրող ծառերը փոխարինվում են քիչ սաղարթ ունեցող փոքր ծառերով: Արդյունքում մեկ շնչին ընկնող կանաչ տարածքը փաստացի չի աճում:

Կառուցապատման ժամանակ քաղաքաշինական նորմերով նախատեսվող կառուցապատում-կանաչ տարածքների հարաբերակցությունը հիմնականում չի պահպանվում, իսկ ավարտական ակտերը տրվում են՝ անտեսելով այս նորմը և կանաչի ապահովումը:

Երևանում և հարակից տարածքներում շահագործվում է 23 հանք, որոնք, ի հավելումն իրականացվող լայնածավալ շինարարության, մեծ փոշու ամպ են կուտակում Երևան քաղաքում, իսկ դա նվազեցնելու համար քայլեր չեն ձեռնարկվում: Ավելին, քաղաքում շահագործվում են քարի վերամշակման բազմաթիվ աղացներ, հիմնականում՝ ապօրինի կերպով: Բացի այդ, Նուբարաշենի աղբավայրում այրումները սաստկացնում են Երևանի գազային աղտոտվածությունը:

<u>Առաջարկներ</u>

Ընդհանուր կանաչապատում և պլանավորում

- Հստակ սահմանել «կանաչ տարածք» հասկացությունը՝ հիմնվելով միջազգային փորձի վրա և դրանում ներառել միայն ծառերն ու թփերը:
- Ստեղծել կանաչ տարածքների ցանց՝ ապահովելով քաղաքի տարբեր կանաչ տարածքների միջև կապերը, որոնք կարող են տարերային և տեխնածին աղետների պարագայում ծառայել որպես բնակչության տարհանման և ժամանակավոր տեղակայման անվտանգության միջանցքներ:

---

[4] https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC6209905/?fbclid=IwAR1MBVPxvMQadMxfa162BNDsEnHBMaePxao3PSILVW0J vDOuBMPrFuzMw88#B36-ijerph-15-02180

[5] https://apps.who.int/iris/handle/10665/345751

[6] https://www.arlis.am/Annexes/7/2023_qaxshinN04hav.docx

[7] https://arar.sci.am/dlibra/publication/362563/edition/332621/content?ref=struct; https://ahms.am/ru/%D0%BA-%D0%BF%D1%80%D0%BE%D0%B1%D0%BB%D0%B5%D0%BC%D0%B5-%D1%81%D0%BE%D0%B7%D0%B4%D0%B0%D0%BD%D0%B8%D1%8F-%D0%BE%D1%80%D0%B3%D0%B0%D0%BD%D0%B8%D0%B7%D0%B0%D1%86%D0%B8%D0%B8-%D0%BF%D0%BE-%D1%81%D0%BE/

- Երևանի 2020թ. հողային հաշվեկշռում քաղաքի տարածքի 15 տոկոսը կազմող՝ 3,330 հեկտար գյուղատնտեսական նշանակության հողերի 82 տոկոսը (2,737 հա), որը հանդիսանում է Երևանի համայնքի սեփականություն, հնարավորինս վերածել ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների:
- Ստեղծել կանաչապատման ստանդարտներ, սահմանել կանաչապատ տարածքների նվազագույն պահանջներ՝ կախված շինարարության ձևից:
- Ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրման փուլում ավելացնել կանաչի ու շինարարության հարաբերակցությունը:
- Նախատեսել պահանջ՝ բոլոր շինարարական նախագծերում ընդգրկելու կանաչապատման բաղադրիչը՝ շինարարության մեկնարկային փուլից սկսած և լիարժեք ապահովելու այն շինարարության ավարտի և շահագործման հանձնելու հետ մեկտեղ:
- Արդիականացնել և ընդլայնել ոռոգման համակարգը, ապահովել նորատունկ ծառերի պատշաճ խնամքը՝ օգտագործելով կաթիլային ոռոգում:
- Նախապատվությունը տալ աբորիգեն տեսակներով ծառատնկումներին, իսկ սիզամարգերում օգտագործել բազմատեսակ խոտաբույսեր: Միևնույն ժամանակ փորձարկել ոչ աբորիգեն տեսակները՝ ուսումնասիրելու դրանց ազդեցությունը տեղական միջավայրի վրա:
- Խթանել կանաչ տանիքների ու ուղղահայաց կանաչապատման մշակույթը՝ հիմնված կաթիլային ոռոգման վրա:
- Ծառեր աճեցնել շարժական տարաներում՝ հեշտացնելով դրանց փոխադրումը և տեղադրումը անհրաժեշտ վայրեր:
- Խրախուսել լանդշաֆտային դիզայներների ներգրավվածությունը շինարարական նախագծերում:
- Ապահովել Երևանի քաղաքապետարանի «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանության» ՀՈԱԿ-ի կազմակերպչական զարգացումը և բավարար ֆինանսավորումը, ինչպես նաև գործունեության թափանցիկությունն ու հաշվետվողականությունը:

Կանաչի պահպանում և հսկողություն

- Ապահովել տնկված ծառերի պատշաճ խնամքը և հսկողությունը պլանավորված ծառատունկի իրականացման նկատմամբ:
- Ստեղծել և պահպանել ծառերի ռեեստր, սահմանել հատուկ կարգով ծառերի հատման գործընթաց՝ արգելելով խորը էտը:
- Կանաչ տարածքների վերականգնումը, ծառերի և թփերի վերականգնողական տնկումները իրականացնել մշակված վերակառուցման նախագծերին համապատասխան:
- Վերանայել և խստացնել կանաչի վնասման համար նախատեսված պատասխանատվության միջոցները:

Հանրային տարածքների պահպանություն

- Հանրային և կանաչ գոտիները դասակարգել և պահպանել որպես ստրատեգիական օբյեկտներ՝ սեյսմիկ անվտանգության ապահովման հիմնավորումներով:

- Ցուցակագրել և հանրայնացնել հանրային տարածքները՝ ապահովելով դրանց պատշաճ ու արդյունավետ օգտագործումը հանրության կողմից:
- Ավելացնել աղբամանների քանակը, կազմակերպել ճիշտ բաշխվածությունը՝ ապահովելով քաղաքի մաքրությունը:
- Հանրային տարածքներում արգելել սրճարանների բարձր երաժշտությունը՝ պահպանելով հասարակական հանգստությունը:
- Հանրային տարածքներում ավելացնել շատրվանները, ջրային ավազանները՝ միկրոկլիմայի կարգավորման նպատակով:

Հատուկ նախագծեր և տարածքներ

- Չեղարկել «Նաիրիտ» գործարանի տարածքում նախատեսվող կառուցապատման ծրագրերը և բացառել տվյալ տարածքի կառուցապատումը, դարձնել այն հանրային սեփականություն և հանրային տարածք:
- Կասկադի և Երևանը շրջապատող մյուս լանջերը ծառապատել՝ նվազեցնելով լանջերի սողքը:
- Արգելել կառուցապատումը կիրճերում և հատուկ պահպանվող տարածքներում:
- Բարելավել բակերի և պուրակների կառավարման համակարգը՝ ստեղծելով համապարփակ մոտեցում նրանց պահպանման և օգտագործման համար:
- Իրականացնել բակային կանաչապատման ծրագրեր՝ ապահովելով ծառերի պատշաճ խնամք:
- Հանրայնացնել պետական մարմինների շենքերի հարակից կանաչապատ տարածքները՝ ապահովելով նրանց հասանելիությունը բնակիչների համար:
- Մշակել և իրականացնել գերեզմանոցների կանաչապատման ծրագրեր՝ հնարավորինս ապահովելու դրանց ներսի և սահմանների կանաչապատումը:
- Ապահովել կանաչի ԱՀԿ նորմերը՝ վերականգնելով Երևանի շրջակա լանջերի կանաչը, քաղաքի շուրջ հիմնելով անտառներ, իսկ Կենտրոնում քանդվող հին շենքերի տեղում՝ պուրակներ:
- Վերահմաստավորել քաղաքային գրադարանները և կինոթատրոնները որպես բազմաֆունկցիոնալ հանրային տարածքներ՝ նպաստելով նրանց օգտագործման արդյունավետությանը:

<u>Կառուցապատում և անվտանգություն</u>

Տասնյակ տարիներով Երևանի կառուցապատումը ակտիվ ընթացել է Երևան քաղաքի կենտրոնում կամ մյուս վարչական շրջանների՝ Կենտրոնին հարող տարածքներում՝ որպես կանոն, առանց հաշվի առնելու քաղաքի ծանրաբեռնվածությունը, փողոցների և այլ ենթակառուցվածքների թողունակությունը, կոմունալ ենթակառուցվածքների կարողությունները, հարակից շենքերի ինսոլյացիան, էկոլոգիական իրավիճակը և այլն:

Երևանը կառուցապատման կարիք ունի, և մասնավորապես բնակֆոնդի հին շենքերը պետք է փոխարինվեն՝ սեյսմիկ անվտանգության ապահովման և աղետների հետևանքները հնարավորինս նվազեցնելու և մեղմելու նկատառումներով, սակայն չպլանավորված, հախուռն, կետային կառուցապատումը՝ բացառապես տնտեսական աճի, ներդրումների և

մասնավոր շահի հետապնդմամբ լուրջ խնդիրներ է առաջացնում: Արդյունքում քաղաքը դարձել է խիստ անհարմարավետ և ստրեսային երևանցիների համար:

Շենքերի կառուցմանը զուգահեռ պետք է զարգացվեն ենթակառուցվածքները, ինչը պատշաճ չի արվում: Շենքերի՝ մայթերից հեռու կառուցելը և նորմերի չպահպանելը նույնպես ռիսկեր են պարունակում: Հնարավոր մեծ երկրաշարժի դեպքում կամուրջների վնասվելու պարագայում լինելու է տեղաշարժվելու և հասանելիության խնդիր, և քաղաքը կաթվածահար է լինելու: Նման այլ դեպքերի համար քաղաքային պլանավորման ընթացքում պետք է լինեն լուծումներ, այդ թվում՝ նախատեսվեն այլընտրանքային ճանապարհներ: Կիրճերի վրա և անմիջապես հարևանությամբ տրամադրվող շինթույլտվությունները մեծ ռիսկ են՝ հաշվի առնելով սեյսմիկ ակտիվ տարածաշրջանը:

Շատ են նորմատիվային խախտումներով բազմաբնակարան շենքերի շինթույլտվությունների տրամադրումը: Այդպիսի օրինակ է միջմարզային մայրուղիներից մի քանի մետր հեռավորության վրա բազմաբնակարան շենքերի շինթույլտվությունը, երբ քաղաքաշինական նորմատիվը սահմանում է 30-50 մետր: Առկա են դեպքեր, երբ շինթույլտվություններ են տրամադրվում այլ հարկայնության համար, հետագայում կառուցապատողները դիմում են վերակառուցման թույլտվության և ավելի բարձր հարկերով շենքեր կառուցում:

Աղետների դեպքում շատ խոցելի են լինելու հաշմանդամություն ունեցող անձիք: Քաղաքի ներկայիս կառուցապատման պրակտիկայում բավարար հաշվի չի առնվում խոցելի խմբերի համար հասանելիության խնդիրը, չեն ապահովվում նախատեսված շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

<u>Առաջարկներ</u>

Կառուցապատման և քաղաքային պլանավորման պրակտիկայի բարեփոխում

- Վերանայել տարածական պլանավորման փաստաթղթերի կազմը և պահանջները՝ վերացնելով հնացած ու ավելորդ փաստաթղթերը (օրինակ՝ միկրոռեգիոնալ համակցված տարածքային հատակագծման նախագծերը) ու ավելացնել բացակայող օղակները (օրինակ՝ գոտիավորման նախագծի և շենքի նախագծի միջև՝ կառուցապատման էսքիզային նախագիծ): Վերացնել «ճարտարապետահատակագծային առաջադրանք» փաստաթուղթը և որևէ կառուցապատման հիմքում դնել բացառապես կառուցապատման գոտևորման նախագծերը:
- Հնարավորինս սեղմ ժամկետներում մշակել Երևանի տարածական պլանավորման համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը՝ հիմքում ունենալով լիարժեք ելակետային տվյալներ՝ վերարժևորալով ներկայումս այդ փաստաթղթերին ներկայացվող պահանջները:
- Վերանայել և արդիականացնել կառուցապատման և բարեկարգման նորմերը՝ ապահովելով անվտանգություն և որակ:
- Կառուցապատման պլանավորման և փորձաքննության աշխատանքներում ապահովել բազմագիտակարգ մոտեցում՝ ապահովելու անվտանգության և կայունության գիտական հիմնավորումը:

- Կառուցապատման խոշոր ծրագրերի իրականացման պարագայում լավագույն ճարտարապետական լուծումների բացահայտման նպատակով կազմակերպել միջազգային ստանդարտներով ճարտարապետական մրցույթներ:
- Վերանայել եկամտահարկի վերադարձի հիմքով կառուցապատման ծրագրերի նպատակահարմարությունը՝ կոռուպցիան կանխարգելելու և սոցիալական արդարությունը չխաթարելու նկատառումներով:
- Կառուցապատման բոլոր ծրագրերում ապահովել սոցիալական բնակարանների հատկացումը:

Սահմանափակումներ և հսկողություն

- Սահմանել ժամանակավոր արգելք փոքր կենտրոնում կառուցապատման նկատմամբ՝ մինչև գոտևորման նախագծի մշակումը:
- Կանգնեցնել առանձին տարածքների շինարարական թույլտվությունների տրամադրումը՝ մինչև դրանց լիարժեք և տվյալահեն գոտևորման փաստաթղթերի մշակման ավարտը:
- Արգելել գերակա բացառիկ հանրային շահ ճանաչել այն տարածքները, որոնց կառուցապատումը հետապնդում է մասնավոր շահ և ծառայելու է առանձին անձանց/ընկերությունների շահերին:
- Վերանայել կառուցապատման խտությունների ու հարկայնության նորմերը՝ հաշվի առնելով ներկայիս տեխնոլոգիաների սահմանափակումները և անվտանգային նկատառումները:
- Խստացնել քաղաքաշինական փորձաքննության որակը, որակի նկատմամբ հսկողությունը և պատասխանատվությունը:
- Հաշվի առնել կառուցապատման կումուլատիվ էֆեկտը ԾՄԱԳ գործընթացներում՝ նկատի առնելով տարբեր ազդեցությունների, մասշտաբների և ժամանակի ընթացքում հետևանքների հնարավոր ուժգնացման գործոնները:
- Ապահովել կառուցապատման նկատմամբ հսկողությունը և վերահսկողությունը փուլային տրամաբանությամբ՝ շինարարության ընթացքում, չսպասելով շինարարության ավարտին, այդ թվում՝ հետևելով կառուցապատողների կողմից պետության/համայնքի առջև ստանձնած պարտավորությունների կատարմանը, ապահովելով շինարարական աշխատանքների համապատասխանությունը հաստատված նորմերին և չափանիշներին, պայմանագրերով նախատեսված ժամկետներին:
- Խստացնել շինարարության ավարտի և հանձն-ընդունման չափանիշներն ու դրա համար պատասխանատվությունը՝ ապահովելով կառուցապատման նախագծերի լիարժեք իրականացում, անհարթությունների (կիսատ աշխատանք, շրջակայքի աղտոտում, փոսեր և այլն) բացառում:
- Խստացնել որակյալ և անվտանգ կառուցապատում ապահովելու համար պատասխանատվությունը:

Սեյսմակայունության ապահովում

- Ստեղծել Երևանի բոլոր թաղամասերի սեյսմիկ միկրոշրջանացման և ինժեներաերկրաբանական պայմանների թվայնացված քարտեզներ:

- Իրականացնել Երևանի ընդերքի և ստորգետնյա ջրերի քարտեզագրում LIDAR համակարգով:
- Սեյսմակայունությունը հաշվարկել պլանավորման փուլից սկսած՝ հիմք ընդունելով կառուցապատվող տարածքի հատակագծերը / ընդհանուր պատկերը:
- Բարձրացնել իրազեկությունը սեյսմիկ անվտանգության մասին, այդ թվում՝ հիմնադրելով «Երկրաշարժի թանգարան»:

Անվտանգային ենթակառուցվածքների/համակարգերի զարգացում

- Կառուցել և բարելավել քաղաքացիական պաշտպանության և պարենային անվտանգության կառույցներ ու ենթակառուցվածքներ՝ ապահովելով քաղաքի դիմադրողականությունը արտակարգ իրավիճակներին:
- Ապահովել էվակուացիոն ուղիներ (այդ թվում՝ բավարար կամուրջներ) և դրանց սեյսմակայունությունը քաղաքում:
- Կառուցել ստորգետնյա ավտոկայաններ և ապաստարաններ՝ կանաչապատ շահագործվող տանիքներով՝ ապահովելով բնակիչների անվտանգությունը արտակարգ իրավիճակներում:
- Երևանի կենտրոնում վերաբացել Գետառը և բարեկարգել հունը՝ հաշվի առնելով գետի հեղեղատար գործառույթը:
- Ձեռնարկել միջոցներ շենքերում սեփականաշնորհված նկուղային տարածքները համայնքին վերադարձնելու և որպես ապաստարան կահավորելու նպատակով:
- Բարձրացնել համատիրությունների պատասխանատվությունը և խստացնել նրանց կողմից ենթակառուցվածքների վերահսկումը:

Մասնագիտական կրթություն և որակի ապահովում

- Վերականգնել և խթանել շինարարական միջին տեխնիկական կրթությունը՝ ապահովելով որակյալ մասնագետների պատրաստումը:
- Զարգացնել ինժեներական և մասնագիտական ներուժը՝ կազմակերպելով վերապատրաստումներ՝ ապահովելու բարձր որակավորում ունեցող մասնագետների առկայությունը և ներգրավումը:
- Մասնագիտական շրջանակների հետ քննարկման առարկա դարձնել հետազննումների, նախագծման, փորձաքննության և շինարարության ոլորտների լիցենզավորման, արտոնագրման և մասնագետների հավաստագրման իրավական կարգավորումների դաշտում առկա հիմնախնդիրները:

Հանրային իրազեկում և մասնակցություն

- Հաստատել մեդիա վերահսկողություն (հանրային հեռարձակող) բոլոր կարևոր կառուցապատման գործընթացների վրա:
- Երաշխավորել շահագրգիռ հասարակության վաղ ու պատշաճ ծանուցումը և նրանց ներգրավումը կենսագործունեության միջավայրին առնչվող փոփոխությունների վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացների վաղ փուլերում՝ հաշվի առնելով նրանց կարծիքը:

- Հանրային իրազեկման պարտադիր պահանջը սահմանել/հստակեցնել ոչ թե արդեն մշակված գլխավոր հատակագծերի և գոտևորման նախագծերի, այլ դրանց հայեցակարգերի փուլերի համար:
- Ներգրավել բնակիչներին բակային տարածքների, պուրակների բարեկարգման աշխատանքներում՝ խթանելով հանրային մասնակցությունը:

<u>Շարժունություն</u>

Երևանում վայրի կառուցապատման՝ բարձրահարկ շենքերի ու հսկայական նոր թաղամասերի շինարարության ընթացքում առհասարակ հաշվի չեն առնվել քաղաքի փողոցների թողունակությունը, անվտանգության կարմիր գծերը, հանրային տրանսպորտի կազմակերպման խնդիրները: Այս խնդիրը մասնավոր փոխադրամիջոցների կտրուկ աճի հետ համատեղ փաստացի կաթվածահար է արել քաղաքը, առանձին ժամերի անանցանելի դարձրել քաղաքի կենտրոնը և մյուս վարչական շրջանները կենտրոնին միացնող փողոցները: Անտեսվել են հանրային տրանսպորտից օգտվող խմբերի, այդ թվում՝ տարեցների, երեխաների, հաշմանդամների կարիքները:

Երևանում տրանսպորտի կազմակերպման սխալ քաղաքականություն է վարվում, ինչի արդյունքում ո՛չ հանրային և ո՛չ էլ մասնավոր փոխադրամիջոցով հնարավոր չէ արդյունավետ երթևեկել և հասնել մի կետից մյուսը: Հեծանվաուղիների և հետիոտնային երթևեկության համար պայմանները նպաստավոր չեն, չկան համապատասխան ենթակառուցվածքներ: Հեծանվաուղիների բացակայության պայմաններում հետիոտնի համար վտանգավոր են դարձել մեծաքանակ էլեկտրական ինքնագնացները:

Փողոցներում գծանշումները և ճանապարհային կահավորումը հաճախ բացակայում են կամ անհրաժեշտից պակաս են, ինչը մեծացնում է ճանապարհատրանսպորտային պատահարների հավանականությունը: Կայանատեղիները չեն բավարարում քաղաքի բնակիչների կարիքները, որոշ տնտեսվարողներ կամ իրավաբանական անձինք ինքնակամ տեղադրում են պատնեշներ, արգելափակոցներ, կառուցապատված մայթերի փոխարեն բնակիչները քայլում են փողոցների երթևեկելի մասերով, ինչն առաջացնում է լրացուցիչ խցանումներ: Այս իրավիճակում հանրային ուղևորափոխադրման պատշաճ կազմակերպումը, ավտոբուսները փոխելուց անդին, դառնում է անհնարին:

Քաղաքային աղմուկին ու սթրեսին գումարվում է մեքենաների բարձր երաժշտությունը: Հանրային տրանսպորտում վարորդները չեն դադարում ծխել:

<u>Առաջարկներ</u>

Երթևեկության կազմակերպում

- Մեքենաների մուտքը Հրազդանի կիրճ սահմանափակել՝ հաշվի առնելով կիրճի նշանակությունը, ինչպես նաև հնարավոր էվակուացիայի դեպքում այլընտրանքային ազատ ճանապարհ ունենալու անհրաժեշտությունը:
- Արգելել Երևանում առանց կատալիզատոր մեքենաների շահագործումը, ինչպես նաև դիտակել ողջ Հայաստանում դրանց արգելումը ողջամիջ ժամանակային կտրվածքում:

- Երևանի առանձին հատվածների համար նախատեսել ավտոմեքենաների սահմանափակման միջոցառումներ, օրինակ՝ սահմանափակել մեքենաների մուտքը փոքր կենտրոնում, արգելել բեռնատարների երթևեկությունը որոշակի ժամերին, կանոնակարգել երթևեկությունը ըստ կենտ և զույգ օրերի՝ մեքենաների համարանիշներից ելնելով, առանձին փողոցներ դարձնել միակողմանի կամ հետիոտն, կանոնակարգել կենտրոնի բնակիչների մուտքի ու շարժման տարբերակված մոտեցումները և այլն:
- Տրանսպորտային հոսքերի պլանավորման շրջանակում հաշվարկել հետիոտնային հոսքերը և մշակել համապատասխան նախագծեր:
- Կարգավորել լուսացույցների աշխատանքը, ամբողջականացնել փողոցների գծանշումները և ճանապարհային կահավորումը, ապահովել պատշաճ լուսավորություն, ներդնել «խելացի քաղաք» համակարգ:
- Փողոցների ու բակերի վերանորոգումն իրականացնել կազմակերպված, համակարգված ու սեղմ ժամկետում՝ բացառելով օրեր-շաբաթներ շարունակ փոսերի, անհարթությունների ու փնթի շինհրապարակերի առկայությունը, նոր վերանորոգած հատվածների կրկին վերանորոգելու անհրաժեշտությունը և այլն:
- Քաղաքային շարժունակությունը կազմակերպել՝ հաշվի առնելով universal design-ի սկզբունքները՝ ապահովելով տարբեր տարիքների ու կարողությունների անձանց համար մատչելիությունը:
- Երթևեկությունը համակարգելու համար ներգրավել երթևեկության կազմակերպման համաշխարհային կարգի ճարտարագետ:

Հանրային տրանսպորտ

- Ընդլայնել մետրոյի ցանցը, ընդ որում՝ դրա շարունակությունը իրականացնել վերգետնյա ցանցի կառուցմամբ, ավելացնել շարժակազմը:
- Դիտարկել ինտեգրված տրանսպորտային քաղաքային ու ագլոմերացիայի (միջքաղաքային) համակարգ՝ հաշվի առնելով տրամվայի կամ թեթեւ երկաթուղու (light rail) ներառումը:
- Ստեղծել ավտոբուսների, հանրային տրանսպորտի հստակ գրաֆիկ, տրանսպորտի չվացուցակում բացի հայերենից ավելացնել եւս մեկ լեզվով տեղեկատվություն:
- Դադարեցնել մեծ երկարություն ունեցող ավտոբուսների ներկրումը, որոնք իրենց չափերի հաշվին ճկուն չեն և հարմար չեն Երևանի փողոցների համար:
- Ստեղծել հանրային տրանսպորտի ցանց Երևանին կից արագ զարգացող համայնքների հետ (Զովունի, Քասախ, Փարաքար):
- Վերանորոգել և կահավորել միջհամայնքային տրանսպորտի ավտոկայանները՝ վերացնելով քաղաքի բանուկ հատվածներում մինի-ավտոկայաններ հիմնելու պրակտիկան:

Տրանսպորտային ենթակառուցվածքների ստեղծում/վերականգնում

- Ավելացնել Երևանի ոչ երթևեկելի գոտիները, բայց ոչ թե/միայն առանձին փողոցներ, այլ իրար շարունակող փողոցներով ստեղծել հետիոտնային գոտի:
- Ստեղծել հեծանվաուղիների առանձին գծեր, որոնք կկազմեն ամբողջական շղթա:

- Բարեկարգել, լայնացնել և ավելորդ կառույցներից ազատել մայթերը՝ ստեղծելով ավելի ապահով ու հարմար երթևկելի գոտի:
- Ստեղծել ուղղահայաց և բազմահարկ ավտոկայանատեղեր, որոնք չեն խաթարի գոյություն ունեցող քաղաքային միջավայրն ու պատմական շերտերը:
- Ավտոտնակների փոխարեն կառուցել ստորգետնյա ակտոկայանատեղեր, որոնց վրա կարող են կառուցվել կանաչ տարածքներ կամ խաղահրապարակներ, ինչպես նաև նախատեսել բազմահարկ ավտոկայանատեղերի կառուցում:
- Բարեկարգել ստորգետնյա և վերգետնյա անցումները, ստեղծել հարմարություններ՝ հաշմանդամություն ունեցող անձանց, սայլակների տեղաշարժման համար:
- Շինարարության, մայթերի, փողոցների բարեկարգման ժամանակ առանձնացնել, փակել կառուցապատվող հատվածը՝ փոշու և անվտանգային նկատառումներից ելնելով:
- Կառուցել քաղաքը շրջանցող օղակ և միջմարզային ճանապարհների և օղակի հատման կետերում ստեղծել տրանսպորտային հաբեր:
- Հրազդան գետի վրա կառուցել 4-րդ և 5-րդ կամուրջներ: Կառուցել և վերականգնել կամուրջների համակարգը՝ ապահովելով քաղաքի երթևեկության հոսքերի հուսալիությունը և անվտանգությունը:
- Վերականգնել ճոպանուղու աշխատանքը, դիտարկել նորերի ստեղծման նպատակահարմարությունը:

<u>Ենթակառուցվածքներ և քաղաքային տնտեսություն</u>

Երևանի կառուցապատման ծավալները համահունչ չեն քաղաքի ինժեներական ենթակառուցվածքների ցանցին ու վիճակին, որի արդյունքում տեղի են ունենում տարբեր հանրային ու համայնքային ծառայությունների մատուցման (ջուր, էլեկտրականություն) խաթարումներ, որոնք իրենց հերթին ավելացնում են քաղաքային սթրեսը: Մինչդեռ, ներկայում Երևան քաղաքում տրված է և ուժի մեջ է 100-ից ավել բազմաբնակարան շենքի կառուցման շինթույլտվություն, այսինքն հանրային ծառայությունների մատուցման խաթարման ռիսկերն ինտենսիվ աճելու են:

Քաղաքապետարանը և որևէ այլ կառույց չի տիրապետում ենթակառուցվածքների վերաբերյալ ամբողջական և, փաստորեն, կառուցապատման համար անհրաժեշտ և ստույգ ելակետային տվյալներին: Այսինքն, քաղաքային իշխանությունները, տալիս են մեծաքանակ շինթույլտվություններ՝ չունենալով համապատասխան սպասարկող ենթակառուցվածքներ: Խիտ կառուցապատման արդյունքում առաջացած ջրի պակասը լրացնելու համար որոշ կառուցապատողներ խմելու ջրի համակարգին խառնում են արտեզյան ջրեր՝ հանգեցնելով դրանց պաշարների հյուծմանը:

Ջրահեռացման համակարգերը ևս խնդրահարույց են և չեն ապահովում հեղեղատար գործառույթը: Ենթակառուցվածքները չեն կարողանում ապահովել բնական հոսքերի հեռացումը, իսկ բնական հեղեղատար հանդիսացող Գետառի փակ պահելը կարող է բերել լուրջ խնդիրների՝ հատկապես հաշվի առնելով կլիմայի փոփոխության հետ կապված անորոշություններն ու ռիսկերը:

Մեկ այլ կարևոր խնդիր է կեղտաջրերի և կոյուղաջրերի մաքրումը: Երևանի աերացիայի կայանն իրականացնում է միայն մեխանիկական մաքրում, իսկ կոյուղաջրերի՝ Հրազդան գետը թափվելը էկոլոգիական մեծ խնդիր է: Նաև վտանգավոր է կոյուղաջրերի և հեռացվող ջրերի մեկ համակարգով հոսելը:

Պատշաճ չի կազմակերպվում աղբահանումը և աղբի կառավարումը: Խնդիրների կանխարգելմանը միտված համապարփակ քաղաքականություն վարելու փոխարեն ծագած խնդիրներին հաճախ տրվում են ռեակտիվ և կցկտուր լուծումներ:

Քաղաքային գերեզմանատները բարձիթողի և փնթի վիճակում են՝ թողնելով մաքրումն ու պահպանությունը անհատական նախաձեռնությունների հույսին:

<u>Առաջարկներ</u>

Հանրային ծառայություններ

- Կազմակերպել առկա և պոտենցիալ ենթակառուցվածքների ամբողջական տվյալների հավաքագրում և վարել տվյալների միասնական բազա ու քարտեզներ՝ արդյունավետ որոշումներ ընդունելու համար:
- Մինչև տվյալների ամբողջականացումը՝ ճշգրտել ենթակառուցվածքների թողունակության վերաբերյալ տվյալները՝ նվազեցնելով կառուցապատումների տեխնիկական և ֆինանսական ռիսկերը:
- Ներդնել արտաքին լարանցումների բացառման միջոցառումներ՝ ապահովելով քաղաքի էսթետիկական և անվտանգային պահանջները:
- Ձեռնարկել միջոցներ գազատար խողովակները տեղափոխելու գետնի տակ:
- Խորացնել Երևանի քաղաքապետարանի համագործակցությունը ՀԾԿՀ-ի հետ՝ ներգրավելով նրանց քաղաքային պլանավորման և ենթակառուցվածքների զարգացման գործընթացներում:

Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր

- Ապահովել խմելու ջրի և ջրահեռացման համակարգերի արդյունավետ մոնիտորինգ՝ կանխարգելելով խողովակների և ջրամատակարարման աղբյուրների աղտոտման ռիսկերը:
- Իրականացնել հեղեղատար և սելավատար բնական և մարդածին համակարգերի մաքրում և վերականգնում՝ նվազեցնելով հեղեղումների և սելավների վտանգները:
- Վերականգնել և մաքրել քաղաքի գետերը և ջրատարները՝ ապահովելով նրանց բնական վիճակը և հոսքերը:

Գերեզմանատներ

- Իրականացնել դիակիզարանի կառուցման ծրագիրը՝ կիրառելով տվյալ մեթոդը ոչ պարտադիր հիմունքով, այլ ցանկացողների համար:
- Մշակել գերեզմանոցների կառավարման պատշաճ կառուցակարգեր:

Թափոնների կառավարում

- Զարգացնել թափոնների և աղբի կառավարման համակարգը՝ կիրառելով ապակենտրոնացված մոդելներ, օրինակ՝ Սլովենիայի մոտեցումը:
- Ներդնել ստորգետնյա աղբամանների կիրառում՝ ապահովելով քաղաքի մաքրությունը և աղբի կառավարման արդյունավետությունը:
- Կազմակերպել աղբի տեսակավորում՝ ապահովելով գործընթացի իրական և արդյունավետ իրականացումը:
- Զարգացնել աղբից էներգիայի ստացման տեխնոլոգիաներ և ներդնել դրանց կիրառման մեխանիզմներ:
- Բարձրացնել հանրային գիտակցությունը թափոնների կառավարման և առնչվող բնապահպանական խնդիրների վերաբերյալ՝ սկսած մանկապարտեզային տարիքից:

Այլ

- Օգտագործել շինթույլտվություններից ստացած տուրքերը՝ նպատակային օգտագործման համար՝ նպաստելով ենթակառուցվածքների զարգացմանը:
- Բարձրացնել համատիրությունների պատասխանատվությունը և խստացնել կողմից վերահսկումը՝ ապահովելով համատիրությունների արդյունավետ գործունեության հիմքեր ու պայմաններ:
- Կառավարել լուսային և ձայնային աղմուկը՝ ներդնելով համապատասխան կանոնակարգեր և մոնիտորինգի համակարգեր:
- Կազմակերպել օդափոխության և աերացիայի համակարգերի վերագործարկում՝ բարելավելով քաղաքի օդի որակը:
- Ձեռնարկել քայլեր՝ ապահովելու քաղաքը պատշաճ հանրային զուգարաններով: